2021-22-ուստարվա 9-րդ ա դասարանի տարեկան հաշվետվություն՝

2019-20 ուս տարին 9-րդ ա դասարանը սկսել է 28 աշակերտով՝14 տղա ու 14 աղջիկ :

Տարվա սկզբին աշակերտները ապահովված են եղել դասագրքերով,դասասենյակը պատրաստ է եղել դասապրոցեսին ու կահավորված անհրաժեշտ պարագաներով:

Տարվա սկզբում՝սեպտեմբերի 1-ին , աշակերտները մասնակցել են գիտելիքի օրվան նվիրված միջոցառմանը:

Դասարանում տիրում է միշտ համերաշխ մթնոլորտ,աշակերտները մեկը մյուսի նկատմամբ լցված են սիրով,հոգատարությամբ ,ընկերասիրությամբ:Մեծագույան հարգանքով են լցված նաեւ բոլոր ուսուցիչների նկատմամբ:

Դասարանում սովորում է մեկ ԿԱՊԿՈՒ աշակերտ՝Դումանյան Սպարտակը,ով ակտիվորեն մասնակցում է բոլոր դպրոցական միջոցառումներին,դասընկերների հետ ունի մտերմիկ հարաբերություններ և ում հետ մշտապես կատարվել է անհատական զրույցներ ՝կապված դասերի հաճախումների,դասերի պատրաստվածության և մասնակցության հետ:

Մշտապես անց եմ կացրել անհատական զրույցներ աշակերտների հետ,պահպանվել է ուսուցիչ-ծնող կապը,անց է կացվել ծնողական ժողովներ ,որոնց ժամանակ եղած խնդիրներին տրվել է համապատասխան լուծումներ:Անցկացրել եմ դասղեկի ժամեր տարբեր թեմաներով:

Ուսումնական տարվա սեպտեմբեր ամսին աշակերտները մասնակցել են անկախության օրվան նվիրված միջոցառմանը,որտեղ աշակերտները փայլեցին իրենց գրագետ խոսքով:

Ունեցել են բաց դասեր ռուսերեն ,կենսաբանություն առարկաներից:

Կիսամյակը ամփոփել ենք ,ավարտել:

Երկրորդ կիսամյակը սկսել ենք28 աշակերտով:

Կիսամյակը սկսեցինք բավականին շատ բացակայություններով,ինչը պայմանավորված էր սուր շնչառական հիվանդությամբ,Covid-ով,ջրծաղիկով:

Արդյունքում աշակերտներից երեքը 120 և ավելի բացակայության հետևանքով տարեվերջին ՝մայիսին , ըստ սահմանված կարգի ,հանձնեցին քննություն

մաթեմատիկա և հայոց լեզու առարկաներից,իսկ մնացած առարկաներից՝ ստուգարքներ:

Աշակերտները մասնակցել են նաև օլիմպիադաների՝ պատմություն ,գրականություն առարկաներից :

Աշակերտները մշտապես մասնակցել են բոլոր շաբաթօրյակներին թե դասարանում, թե՝ դպրոցի բակում:

Տարեվերջին կազմակերպել ենք էքսկուրսիա դեպի Դենդրոպարկ, Չքնաղ Լոռվա բերդ,որին մասնակցում էր ամբողջ դասարանը:

Հունիս ամսին կազմակերպել ենք<< Վերջին դաս>> միջոցառումը ,որտեղ աշակերտները իրենց սրտի խոսքը ուղղեցին ուսուցիչներին:Դասն ավարտելուց հետո դասարանով այցելեցինք ՍՀովհաննես եկեղեցի:Եկեղեցու բակում աշակերտները իրենց երազանքի փուչիկները ուղարկեցին երկինք:

Դպրոցն ավարտեցինք 28 աշակերտով ,ունեցանք 8 հարվածային,20 միջակ սովորողներ:

Ապա աշակերտները պատրաստվում էին ավարտական քննություններին ,մասնակցում էին քննական առարկաների ուսուցիչների կողմից անցկացրած խորհրդատվություններին,որոնց արդյունքում էլ բավականին բարձր գնահատականներով կարողացան հանձնել բոլոր քննությունները:

Դասղեկ՝ Տ.Հովհաննիսյան